

**2009 թ. 9 ամսում Հայաստանի Հանրապետությունում  
հանցավորության վիճակի եւ դրա դեմ ՀՀ ոստիկանության  
ստորաբաժանումների ու տարածքային մարմինների կողմից տարվող  
պայքարի արդյունավետության մասին**

2009թ. 9 ամսում ՀՀ ոստիկանությունը կատարել է իր առջեւ դրված խնդիրները՝ օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում ձեռնարկված միջոցառումների շնորհիվ հանրապետությունում լիովին վերահսկվել է օպերատիվ իրավիճակը, պահպանվել է կայուն հասարակական կարգ ու կանոն:

Շարունակվել է ակտիվ աշխատանքը լատենտային բնույթ կրող հանցագործությունների հայտնաբերման, ինչպես եւ հանցագործությունները հաշվառումից թաքցնելու արատավոր գործելաճը բացառելու ուղղությամբ, ինչը նպաստել է հանրապետությունում գրանցված հանցագործությունների ընդհանուր թվաքանակի կտրուկ աճին՝ 57,0%-ով կամ 3894 դեպքով (2008թ. 9 ամսում՝ 6825, 2009թ. 9 ամսում՝ 10719):

Հանցագործությունների թվաքանակի նման աննախադեպ աճը պայմանավորվել է նաեւ տուժողի բողոքի բացակայության պայմաններում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183 հոդվածով կարճված գործերի կամ մերժված նյութերի հաշվառման հանգամանքով, ինչպես եւ այն հանգամանքով, որ 2585 հանցագործության դեպք, կատարված լինելով նախկին տարիներին, ոստիկանության ջանքերով հայտնաբերվել եւ հաշվառման են վերցվել ընթացիկ տարվա 9 ամիսների ընթացքում (2008թ. 9 ամսում՝ 1305):

Հանցագործությունների ընդհանուր թվաքանակի աճի պարագայում, բնականաբար, աճել է նաեւ հանցավորության գործակիցը: Հաշվետու ժամանակահատվածում 100.000 բնակչին բաժին ընկնող հանցագործությունների թիվը հանրապետությունում կազմել է 333 (2008թ. 9 ամսում՝ 212):

37,7%-ով (2852-ից 3926) աճել է ծանր եւ 30,3%-ով առանձնապես ծանր հանցագործությունների քանակը (142-185):

Մարդու դեմ ուղղված հանցագործությունների կազմում նվազում է արձանագրվել սպանության (62-61), սպանության փորձերի (23-17) եւ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերով (168-138):

Սեփականության դեմ կատարված ոտնձգություններում նվազում է արձանագրվել ավազակության (111-110) եւ տրանսպորտային միջոց փախցնելու դեպքերով (61-43):

Ոստիկանության ստորաբաժանումների կողմից զենքի եւ ռազմամթերքի առգրավման կամ կամավոր հանձնման ուղղությամբ տարվող աշխատանքներն արդյունավետությամբ գերազանցել են 2008թ-ի նույն ժամանակահատվածի արդյունքները: Արձանագրվել է զենքի եւ ռազմամթերքի ապօրինի շրջանառության 318 դեպք, ինչը 77,7%-ով ավելի է, քան 2008թ. 9 ամսում (179): Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ առգրավվել եւ բնակչության կողմից կամավոր հանձնվել է ապօրինի պահվող 971 միավոր հրազեն, ինչն ավելի քան 3.5 անգամ ավելի է, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում (272):

Հանցագործությունների ընդհանուր քանակի աճի, բնականաբար՝ նաեւ աշխատանքային ծանրաբեռնվածության զգալի ավելացման պարագայում, գրեթե բոլոր հիմնական ուղղություններով արձանագրվել է ցուցանիշների նկատելի բարելավում: Այսպես, վարույթում գտնվող քրեական գործերով ընդհանուր հանցագործությունների բացահայտման արդյունավետությունն աճել է 9,0%-ով (68,8%-ից 77,8%), քրեական հետախուզության գծով՝ 5,3%-ով (68,4%-ից 73,7%), ծանր հանցագործություններով՝ 1,5%-ով (63,3%-ից 64,8%), առանձնապես ծանր հանցագործություններով՝ 14,5%-ով (52,8%-ից 67,3%):

Բացահայտման աշխատանքների արդյունավետությունը բարելավվել է մարդու դեմ ուղղված հանցագործություններով, այդ թվում՝ սպանություններով եւ սպանության փորձերով, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու, այդ թվում՝ ծանր վնաս պատճառելու:

Որոշակի աճ է նկատվել նախկին տարիներին կասեցված քրեական գործերով հանցագործությունների բացահայտման ուղղությամբ: Բացահայտված հանցագործությունների թիվն աճել է 26 դեպքով կամ 2,8%-ով: Միեւնույն ժամանակ, հանցագործություն կատարած անձի ինքնությունը պարզված չլինելու պատճառաբանությամբ կասեցված քրեական գործերով բացահայտված հանցագործությունների թիվն աճել է 43 դեպքով կամ 52,4%-ով:

Անդրադառնալով թմրամիջոցների հետ կապված հանցագործություններին, հարկ է նշել, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, հայտնաբերվել է 277-ով կամ 50,5%-ով ավելի նման հանցագործության դեպք: Հայտնաբերվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության 819 դեպք՝ 406-ով կամ մոտ 2 անգամ ավելի, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում: Ցուցանիշներն աճել են նաեւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի արդյունավետությունը բնութագրող այնպիսի առանցքային ուղղությամբ, ինչպիսին է թմրամիջոցների իրացումը. նախորդ տարվա 9 ամիսների համեմատությամբ, ՀՀ քր. օր-ի 266 հոդվածի հատկանիշներով դեպքերի հայտնաբերումն աճել է 159-ով (2008թ. 9 ամսում՝ 170, 2009թ. 9 ամսում՝ 329):

Հանրապետության իրավապահ մարմինների կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ապօրինի շրջանառությունից առգրավվել է 28 կգ 490 գրամ թմրամիջոցներ:

Հետեւողականորեն շարունակվել է պայքարը մարդկանց ապօրինի փոխադրման (թրաֆիքինգի) դեմ: Բացահայտվել է կանանց պոռնկության ներգրավելու եւ շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման 12 դեպք:

ՀՀ ոստիկանության օպերատիվ ծառայությունները եւ տարածքային մարմինները, համագործակցելով հանրապետության մյուս իրավապահ մարմինների հետ, հայտնաբերել են տնտեսական գործունեության դեմ ուղղված 652 հանցագործության դեպք (2008թ. 9 ամսում՝ 313):

Իրագործելով ՀՀ Նախագահի հանձնարարականի, ինչպես եւ ՀՀ Կառավարության գործունեության ծրագրային դրույթները՝ ՀՀ իրավապահ մարմինները զգալի աշխատանք են կատարել կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում: Արդյունքում՝ հանրապետության իրավապահ մարմինների կողմից

հայտնաբերվել են կոռուպցիոն բնույթի 398 հանցագործության դեպքեր, որոնցից 242-ը՝ բացահայտել է ոստիկանությունը: Կաշառակերության 46 եւ առեւտրային կաշառքի 3 դեպքերից 33-ը ի հայտ է բերվել ոստիկանության ջանքերով:

Որոշակիորեն բարելավվել է փախուստի մեջ գտնվող հանցագործների հետախուզման եւ անհայտ կորած անձանց հայտնաբերման ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունավետությունը: Ոստիկանության մարմինների կողմից հետախուզվող հանցագործներից հայտնաբերվել են 1332-ը (2008թ. 9 ամսում՝ 1199-ը), որոնցից 30-ը հետախուզվել են սպանության, 1-ը՝ բռնաբարության, 19-ը՝ ավազակության, 9-ը՝ կողոպուտի, 67-ը՝ գողության, 96-ը՝ խարդախության, 40-ը՝ խուլիգանության, 30-ը՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու համար:

Արտաքին ծառայության ստորաբաժանումներում ընդգրկված աշխատակիցների ուժերով պատշաճ հասարակական կարգ է ապահովվել 1301 զանգվածային միջոցառումների ընթացքում:

2009թ. 9 ամիսների ընթացքում հանրապետության տարածքում արձանագրվել է 1409 ճանապարհատրանսպորտային պատահար, ինչի հետեւանքով զոհվել է 232 եւ մարմնական վնասվածքներ ստացել 1965 մարդ, պատահարների քանակը նվազել է 160-ով կամ 10,2%-ով, վիրավորների թիվը՝ 296-ով, իսկ զոհերի թիվը՝ 57-ով:

Բնակչության շրջանում ոստիկանության նկատմամբ վստահության բարձրացման առումով ՀՀ ոստիկանությունը խիստ կարելորդ է նաեւ յուրաքանչյուր ծառայողի կողմից օրինականության պահպանման խնդիրը: 2009թ. 9 ամիսների ընթացքում ոստիկանության ծառայողին ոչ վայել արարք կատարելու համար 55 ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

Ընդհանուր առմամբ, կարգապահական տույժի են ենթարկվել 673 ծառայողներ, որոնցից 33-ը ազատվել են ոստիկանությունից, իջեցվել է 5-ի պաշտոնը, 8-ի՝ կոչումը, պաշտոնին ոչ լրիվ համապատասխանելու մասին զգուշացվել են 22 ծառայողներ եւ այլն:

Ամփոփելով 9 ամիսների ընթացքում կատարված աշխատանքները, ոստիկանության ղեկավարությունը հավաստիացնում է, որ կձեռնարկվեն անհրաժեշտ միջոցներ հանցավորության դեմ պայքարի արդյունավետությունն էլ ավելի բարձրացնելու, անձնակազմի շրջանում օրինականությունն ու կարգապահությունն ամրապնդելու ուղղությամբ: